



ԱԿԱԳ. Լ. ՄԱՆԱՆԻՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ*

Գրերի գյուտը Հայաստանում նպատակ ուներ, ինչպես և գոթերի ու սլավոնների մոտ, քրիստոնեական գրագիտության ստեղծումը տեղական լեզվով: Սակայն, ակներև է, որ Հայաստանի քաղաքական ամենաժանր ճգնաժամային դարաշրջանում՝ գրականության առաջացումը և տարածումը մայրենի լեզվով ստացավ նաև քաղաքական մեծ նշանակություն:

Հայ ժողովրդի հանճարեղ զավակ Մեսրոպ Մաշտոցի գյուտը այն զորեղ զենքն էր, որն արթնացնելով հայ ժողովրդի մեջ նրա ազդային ինքնագիտակցությունը, զինեց նրան, ազնվաշնչեղ դեպի համառ կոխի և հաղթանակ:

4-րդ դարի վերջը և 5-րդ դարի երկրորդ կեսը հանդիսանում են Հայաստանի պատմության մեջ ապստամբությունների ու տուհուն պայքարի հերոսական շրջան ընդդեմ Սասանյան Պարսկաստանի: Այդ պայքարը կրում էր ոչ միայն կրոնական, այլև սոցիալական և, գլխավորապես, ժողովրդական-ազատագրական բնույթ:

Հին հայկական աղբյուրների հաղորդումներից երևում է, որ Հազկերտ 2-ի (438—457 թ. թ.) ժամանակ Սասանյան Պարսկաստանը փորձեր էր անում մտցնել և տարածել Արևելյան Հայաստանում և ամբողջ Անդերկովկասում պետական-մադդեական կրոնը և միաժամանակ ձգտում էր ոչնչացնել այդտեղ արմատավորված նախարարական կարգերը, որոնք ապահովում էին երկրի ինքնուրույնությունը, և իջեցնել նախարարա-

կան Հայաստանը մյուս իրանական զավառների աստիճանին: Նա միաժամանակ ուժեղացրեց ժողովրդական մասսաների շահադործումը, ավելացնելով երկրից դանձվող պետական հարկերը: Պարսկական կառավարությունը այդ անում էր, ինչպես հազորդում է եղիշե պատմագիրը, այն նպատակով, որպեսզի հասցնի գյուղացի շինականներին լիակատար աղքատության և ստիպի նրանց ընդունել մոզերի կրոնը:

Ինչպես հաղորդում են պատմագիրները՝ Հազար Փարսեցին և եղիշեն, 450 թվին ամբողջ Արևելյան Հայաստանում բռնկվեց ժողովրդական ապստամբություն՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ: Սակայն, հայկական աշխարհազորը, որ բաղկացած էր գերազանցորեն հասարակ մարդկանցից և համարձակություն էր ունեցել դուրս գալ ընդդեմ ահեղ պարսկական ռմակների, մի քանի մարտերից հետո, որ վերջացան պարսիկների հաղթանակով, ջարդվեց Ավարայրի դաշտում (451 թ.), որը գտնվում էր այժմյան Մակուից ոչ հեռու Մյդ կոմում հերոսաբար ընկան Վարդան Մամիկոնյանը և նրա քաջարի զինակիցները:

450—451 թվերի ապստամբությունը ճնշելուց հետո, Սասանյան Պարսկաստանը հասավ իր նպատակին: Նախարարական Հայաստանը զրկվեց իր ներքին ինքնուրույնությունից և հավասարեցվեց մյուս պարսկական մարդապետություններին, և այնտեղ իշխանություն ու նշանակություն ստացան այն նախարարները, որոնք հրաժարվեցին քրիստոնեությունից:

Ավելի քան երեսուն տարի շարունակվեց Արևելյան Հայաստանում պարսկական կա-

* Շարունակված ամսագրի 1956 թվականի N VI-ից և VII-ից:

ռավարության գործակիցների և զրաժուհիների իշխանությունը, որոնք ընդունել էին մագդեականությունը:

Ավերված և ստրկացած Հայաստանը սպասում էր մի հարմար ժամանակի, որպեսզի դուրս գար ընդդեմ բռնակալների, որոնք խեղդել էին նրա կուլտուրական ինքնությունությունը: Հերոս մարտիկների օրինակը, որոնք ընկել էին 451 թվականին անհավասար կռուվում, ոգեշնչում էր ժողովրդական մասսաներին: Եվ 481 թվականին Արևելյան Հայաստանում բռնկվեց նոր ապստամբություն ընդդեմ՝ պարսիկների՝ դաշնակցությամբ Վրաստանի և Աղվանքի:

Այս անգամ ապստամբության գլուխը 451 թվականին նահատակված Վարդան Մամիկոնյանի եղբորորդի Վահան Մամիկոնյանն էր: Ապստամբության չորրորդ տարվա վերջին, 484 թվականին, Հեփթաղների երկրում իր կրած սարսափելի պարտությունից հետո, Պարսկաստանը ստիպված էր ապստամբների հետ բանակցության մեջ մտնել և կնքել խաղաղության դաշինք Վահան Մամիկոնյանի առաջադրած պայմաններով:

Այդ համաձայնության հիման վրա վերականգնված են եղել նախարարական Հայաստանի նախկին իրավունքները և արտոնությունները և ապահովվել է Հայկական Քրիստոնեական նկեղեցու ազատությունն ու երկրի կուլտուրական ինքնությունությունը:

Ուշագրավ է, որ հայ ժողովրդի մեծ պայքարի դարաշրջանը, որ սկսվել էր 4-րդ դարի վերջում և ավարտվել էր 5-րդ դարի վերջում, եղել է աշխարհ կոչված հայկական գրականության ոսկեդարը:

Հայերեն գրականության առաջացման ու զարգացման այս վաղ շրջանում թարգմանվել են հայերեն լեզվով ասորերենից և, գերազանցորեն հունարենից՝ բացի Աստվածաշնչից և եկեղեցական գրքերից, քրիստոնեական հարյուրավոր այլ երկեր: Այդ թարգմանություններից շատերի մեջ լեզվի գեղեցկությունը և նրբությունը դուրսկցված են բացարձակ ճշտության հետ:

Այդ դարաշրջանի թարգմանություններից մեր ձեռքը հասել են մի քանի թանկարժեք եկեղեցա-պատմական և պատմական երկեր՝ նվաճելուս Կեսարացու ժամանակագրությունը, Արիստրիդես Աթենացու երկը և ուրիշները, որոնց բնագրերը չեն պահպանվել: Նույն ժամանակը զբաղում են եղել պատմական և գիտական ինքնուրույն երկեր՝ Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդացու, Նզնիկ Կողբացու և ուրիշների, որոնք թարգմանվել են եվրոպական լեզուներով:

5-րդ դարի վերջում հին հայկական գրականության մեջ սկիզբ առավ և զարգացավ

աշխարհ կոչված, հունարեն դպրոցը: Հանդես եկավ ընդարձակ թարգմանական գրականություն հունարենից, որն ընդգրկում էր հին աշխարհի գիտելիքների բոլոր ճյուղերը՝ բերականությունը, աստղաբաշխությունը, ճարտասանությունը, փիլիսոփայությունը և այլն: Հայերեն թարգմանական գրականության մեջ պահպանվել են հնադարյան գրողների մի շարք երկեր, որոնց բնագրերը կորել են:

Այդ բաղմակողմանի թարգմանական գրականությունը հնարավորություն տվեց հայերի հետագա սերունդներին ձեռք բերել գիտական տեղեկություններ մայրենի լեզվով: Հունական գիտության ու գրականության երկերը զարթեցնում էին մարդկանց միտքը, լայնացնում էին նրանց մտավոր հորիզոնը և մղում էին դեպի ինքնուրույն աշխատանք: Հետագա դարերում նրանք առաջ բերին Հայաստանում հարուստ մեկնաբանական գրականություն՝ փիլիսոփաների, բերականագիտների և հունարեն հայ գրողների:

Հայ ժողովրդի շնորհատվող ստեղծագործական կարողությունը հատկապես լրիվ շափով արտահայտվել է պատմության գծով: Հայերի ընդարձակ պատմական գրականությունը, Արևելքի բոլոր պատմական գրականություններից ամենից հարուստը, ծառայում է իրրե արժեքավոր աղբյուր՝ ոչ միայն Հայաստանի պատմությունը ուսումնասիրելու համար, այլև Պարսկաստանի, Բյուզանդիայի, Վրաստանի, Ադրբեջանի և Մերձավոր Արևելքի համարյա բոլոր ժողովուրդներին:

Պահպանված բաղմաթիվ թարգմանական և ինքնուրույն գրվածքները, որոնք վերաբերում են աստղաբաշխության, մաթեմատիկայի, բժշկության և գիտության այլ ճյուղերին, մինչև այժմ քիչ են ուսումնասիրված և, մեծ մասամբ, հրատարակված չեն:

Հայերի գրական ժառանգությունը, անշուշտ, հանդիսանում է իրրե արժեքավոր ներդրում համամարդկային կուլտուրայի մեջ:

Հայերի հելլենիստական տրամադրությունների և բյուզանդական կողմնորոշմանը ծանր հարված հասցրեց 4-րդ դարի առաջին կիսում հենց ինքը Բյուզանդիան, որը Հուստինիանոս կայսեր ժամանակ (527—565 թ. թ.) խիստ փոխեց իր քաղաքականությունը հայկական արևմտյան երկրամասերի վերաբերմամբ: 384—387 թ. թ. Հայաստանի բաժանումից հետո, կաշարությանը միացված սատրապությունները և ներքին Հայաստանը իրենց ներքին կազմակերպական խնդիրների կարգավորման վերաբերմամբ, համարյա մեկ և կես դարի ընթացքում եղել են ինքնուրույն: Կաշարությունը, պահելով նրանց նախարարական հասարակարգը, պարսադրել:

էր նրանց ցույց տալ զինվորական օգնության պարտիկների գեմ:

Այդ դրույթի մեջ էին մնում հիշված մարզերը մինչև Հուստինիանոսի թագավորելը, որն առաջին անգամը սկսեց վարել հարձակողական միաձուլման քաղաքականություն, նպատակ զննելով ոչնչացնել նախարարական հասարակարգը և ներքին ինքնուրույնությունը:

529, 535 և 536 թվականներին Հուստինիանոսի հրատարակած մի շարք հրովարտական, բով Քյուզանդական Հայաստանը ենթարկվեց վերականգնության և վերածվեց սովորական նահանգի՝ հստակաձև օրենքներով և ենթարկվեց ծանր հարկատվության:

Երկրի հասարակական-քաղաքական ինքնուրույն կազմակերպության բեկումը և ծանր հարկային ճնշումը այստեղ ևս առաջ բերին, ինչպես այդ տեղի էր ունեցել Արևելյան Պարսկական Հայաստանում 450/451 և 481—484 թվականներին, ընդհանուր վրդովմունք, որը վերածվեց բացարձակ ապստամբության:

Պրոկոպիոս պատմագրի հազարդադրություններից երևում է, որ ապստամբները սպանել էին ներքին Հայաստանի վարիչ՝ Ակակիոսին: Հայտնի է նաև, որ հայ Արշակունիները՝ Արշակը և Արտավանը մայրաքաղաքում կազմակերպել էին իրեն՝ Հուստինիանոս կայսեր գեմ զավաղորդվում:

Հուստինիանոսի բարենորոգումների միջոցով Քյուզանդական Հայաստանում ոչնչացված է եղել ֆեոդալական նախարարական կենցաղը և արգելք է դրվել նրա կուլտուրական ինքնուրույն զարգացմանը: Եթե Քյուզանդական Հայաստանի հայերը, չնայելով իրենց ներքին ինքնուրույնության վերացմանը, չէին ենթարկվել լիակատար ռոմանակա՝ նացման՝ և նրանց կուլտուրան կայսերական կարգերի հորձանքի մեջ մշտապես չէր մաքրել, այդ բացատրվում է, անշուշտ, նրանով, որ նրանք մայրենի լեզվով ունեին զրահանություն և դպրոցներ:

Հայ ժողովրդի միաձուլման քաղաքականությունը, ինչպես տեսնում ենք, հաջողություն չէր ունեցել ոչ միայն 5-րդ, այլև 6-րդ դարում:

Հունա-հռոմեական Արեմոտրի կոիվները իրանական Արևելքի հետ, որ սկսվել էին առաջին դարում մեր թվականությունից առաջ, շարունակվել էին ընդհատումներով համարյա րոմբը հարյուր տարի: Այդ կոիվները համախառն դարձան և ընդունեցին կատարի բնույթ 6-րդ դարում և 7-րդ դարի սկզբում: Այդ կոիվները այնքան հյուսիս էին երկու կողմերին, որ ոչ Քյուզանդիան և ոչ Պարսկաստանը չկարողացան ընդդիմանալ նոր

համաշխարհային ուժի՝ Իսլամի ու արաբական խալիֆայության դրոշմին:

Հայաստանի վրա, որ դառնում էր այդ իրադարձությունների հանգույցում, այդ կոիվների ընթացքում թափվում էին ամենածանր հարվածները: Կուլդ պետությունների դուրբերը, որոնք մնում էին նրա սահմանները, թողնում էին ստակալի հետքեր: 7-րդ դարի ընթացքում Հայաստանը պարբերաբար թալանում, աչրում և ավերում էին, բնակիչներին զերում, սպանում ու լուծանում: Այդ արշավանքներից հետո Հայաստանի քաղաքները համախառն դառնում էին ավերակների կույտ՝ ամբողջ զավառներ բանդում և ավերում էին ու ամեն անգամ բնակչությունը համառաշխատանքով ստիպված էր լինում շինել ու նորից վերականգնել քանդված բնակիչի վայրերը:

Այդ պարբերաբար կրկնվող աղետները չափազանց ծանր էին անդրադառնում Հին Հայաստանի վրա: Նրանք արգելք էին հանդիսանում երկրի բարեկեցությանը և առաջացնում էին կյանքի տեսական լճացում, իսկ երբեմն, բացառիկ ցնցումներից հետո, երկրի տնտեսական զարգացումը վերականգնում էր ավելի ցածր հիմքերի վրա: Հասնելով արտեսական հարաբերությունների՝ համեմատաբար բարձր մակարդակի և իր քաղաքային առևտրական կենտրոնների զգալի զարգացման, Հայաստանի տնտեսական կյանքը համախառն էր շարտվում, բայց որում այնտեղ զերակշռող նշանակություն էին ստանում բնական տնտեսության հիմքերը:

7-րդ դարի առաջին կեսում Սասանյան Պարսկաստանը ջախջախվել էր արաբների կողմից և զաղարել էր գոյություն ունենալուց, իսկ Քյուզանդական կայսրությունը հետ էր մղվել զեպի փոքր Ասիայի խորքերը:

Հայաստանը դեռևս չէր կարողացել կազմավորվել նախընթաց երկարատև Քյուզանդական-Սասանյան հյուսիսային կոիվների հետևանքներից, և սկսած 640 թվականից կրեց արաբական արշավանքների բոլոր սարսափները և աղետները: Արաբների ավերիչ ապստամբությունները (640, 642—643 և 650 թվականներին), որոնք զուգակցվում էին թալանով, ավերումներով և բնակչության գերեվառությամբ, պարբերաբար կրկնվում էին՝ Միջագետքի կողմից և հարավ-արևելքից՝ Աղբյուրների կողմից: Ստեղծված պայմանների հետևանքով, Հայաստանը ճանաչեց արաբական խալիֆայության իշխանությունը՝ ներքին ինքնավարության և ֆեոդալական-նախարարական կազմակերպության պահպանման որոշ պայմաններով:

Այդ ժամանակվա Հայաստանի խոշոր պատմական գեմերից էր Ռշտունյաց մարզի

իշխան Ռեոդորոսը, որն ամեն կերպ աշխատում էր համախմբել երկրի ուժերը՝ արտաքին թշնամուց պաշտպանվելու համար։

Դեռևս Արարատյան շրջանը 640 թվականներին արարների առաջին անգամը ներխուժելու ժամանակ, երբ արարները ավարով ու գերիներով վերադառնում էին իրենց քանդած ու ավերած Դվին քաղաքից, Ռեոդորոս Ռշտունին հարձակվեց նրանց վրա փոքրամիջ զորքով, գերինների ազատելու համար։ Սակայն նա ստիպված էր հետ քաշվել թշնամու գերազանց ուժերի պատճառով։ Կարճ ժամանակից հետո, արարների երկրորդ արշավանքի ժամանակ (642—643 թ. թ.), Ռեոդորոս Ռշտունին, վրդովված լինելով բյուզանդական զորավար Պրոկոպիոսի անգործությունից, իր ուժերով, առանց հունական զորքերի օգնության, դիմադրություն ցույց տվեց արարներին, շարժեց նրանց Կոգովիտ դեպի և հետ վերցրեց գերիններին ու ավարը։ Նմանապես նաև 650 թվականին, երբ արարները դեռ նոր էին սկսել իրենց վերջրած ամրոցում կոտորածը և թալանը, հայ ժողովրդի այդ քաջարի զավակը, որը դարձել էր ժողովրդական-ազատագրական սլաքարի առաջնորդը, մատնեց նրանց լիակատար պարտության և փրկեց բնակչությանը և գերիններին։

Վերջ ի վերջո, որպեսզի ազատի երկիրը, Ռեոդորոս Ռշտունին, տեսնելով արաբների անխուսափելի հաղթանակը, համաձայնության եկավ նրանց հետ։

Արարական տիրապետությունը Հայաստանում հիմնավորվեց 7-րդ դարի հիսնական թվականների սկզբում և շարունակվեց մինչև Հայաստանում Բաղրատունիների թագավորության հաստատումը (653 թվականից մինչև 887—888 թվականները)։

Նոր աշխարհականների իշխանության առաջին շրջանում, սկսած 653-ից մինչև 750 թվականը, համարյա մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում Հայաստանը դառնում էր Օսմանյան խալիֆաների իշխանության տակ, իսկ 750—887 թվականներին, «սլախն» մինչև Բաղրատունիների թագավորության առաջացումը, Հայաստանը ենթարկվել էր Արաբյան տոհմի խալիֆաներին։ Արաբական տիրապետության առաջին շրջանում խալիֆայության կենտրոնը գտնվում էր Դամասկոսում և նոր կազմակերպված պետության մեջ գլխավոր դերը խաղում էին Սլեյխի առարները. իսկ երկրորդ շրջանում կենտրոն էր դարձել Բաղդադը, որը հիմնվել էր 762 թվականին, և խալիֆայության մեջ գլխավոր դերը խաղում էին Իրաքի արաբները ու մահմեդականություն ընդունած պարսկական սղավականությունը։

Օսմանյանների ժամանակ, մասնավոր նրանց տիրապետության առաջին շրջանում, արաբական իշխանությունը Հայաստանում, ինչպես և նրանց կողմից բնակչության շահագործումը, իհարկե գլխավորապես, ստորին խավերի, եղել են համեմատաբար տանելի։ Աշխարհականների այդ զգույշ և մեղմ բազմաթիվությունը բացատրվում է նրանով, որ Օսմանյանները հաշվի էին առնում Հայաստանի խոշոր ուղղմական ու զինվորական նշանակությունը, պահելով նրա ներքին խնդրությունները ու նախկին նախարարական կարգերը, ցանկանում էին օգտագործել նրա զինվորական ուժը իրենց նոր սահմանները պաշտպանելու ընդդեմ Բյուզանդիայի և խալիֆաների։

Սակայն արաբական տիրապետությունը, նույնիսկ այդ ժամանակաշրջանում, Հայաստանի համար եղել է կորստաբեր։ Բյուզանդիայի և խալիֆայության միջև պարբերաբար կրկնվող կռիվների ժամանակ, Հայաստանը հաճախ փոխել է իր կողմնորոշումը և ենթարկվել է անխնայ ավերածությունների, թե՛ մեկի և թե՛ մյուսի կողմից։ Նիսի նա հավատարիմ էր մնում խալիֆայությանը, դաժան կերպով պատժում էին հույները, իսկ եթե անցնում էր Բյուզանդիայի կողմը, վրեժ էին առնում արաբները։

Հայաստանի հյուծմանը նպաստեց նաև հարկերի անշափ ափսոսանքը Հաշմ խալիֆի (724—743 թ. թ.) և առաջին Արաբյանների ժամանակ (8-րդ դարի երկրորդ կեսում)։

724—725 թվականներին, Հաշմի հրամանով, Հայաստանում կատարվեց ընդհանուր մարդահամար, ըստ որում հաշվի էին առնելով մարդիկ, անասուններ և հողերը։ Այդ հաշվառումից հետո վերացվում էին ֆեոդալական Հայաստանի նախկին արտոնությունները։ Հարկերը դանձվում էին ոչ թե տներից կամ ծովներից, ինչպես առաջ, այլ մարդազգյուխ, նաև ըստ հողերի տարածության և, հավանորեն, նաև ըստ հողային հանդամասերի որակի։

Այդպիսով մտցվում էր անհատական հարկատվության նոր ձև։ Այդ ձևը շուտով դարձավ ամբողջ երկրի համար խոսկական աղետ և, հատկապես, հարկատու ռաբիկների, այսինքն ճորտացած գյուղացիության և քաղաքի բնակչության ստորին խավերի համար։ Այդ այն ծանր արաբական հարկային լուծն էր, որը պատճառ դարձավ խոշոր ժողովրդական ապստամբությունների բռնկմանը ընդդեմ խալիֆայության։

Արաբյանների իշխանության հաստատումից հետո (8-րդ դարի կեսերին), Հայաստանի դրությունը դարձավ անտանելի։ Նոր պետական ղեկավարությունը չափից դուրս

ավելացրեց հարկային ծանրությունը և հարկատու բնակչության մեծագույն մասը բնկավ ծայրահեղ աղքատության մեջ:

Ղեկնող պատմագրի հաղորդագրության համաձայն, Մանսուր խալիֆայի (754—775 թ. թ.) ժամանակ, Հայաստանը, արժաթի ու ալյ թանկագին մետաղների պակասության պատճառով, անկարող եղավ վճարել Արաույաններին գրամական տուրքերը: Փարզ է, թե ինչպիսի կորստարեր հետևանքներ պետք է ունենար այդ իրողությունը: Ղեկնող հաղորդագրությունից երևում է, որ բնակչությունը վաճառում էր իր գույքը շնչին գներով, և ոչ մի կերպ չէր կարողանում հափարել պահանջվող դրամներ, հարկերը վճարելու համար: Միևնույն Նոտրո ժամանակագրության վկայությամբ, Նյուաստանի Միջադեպում «այնքան էր արժաթի պակասել, որ եղները և էշերը վաճառում էին ամեն մեկը մեկ դիրհեմի» մոտավորապես 50 կոպ. ոսկով) և տալիս էին հարկահավաքներին իրենց երեխաներին՝ յուրաքանչյուրը 5 դիրհեմի (2 ո. 50 կ.):

Համատարած հալածանքների և բռնությունների նոր պայմաններում Մանսուր խալիֆան, բնականաբար, չէր կարող վստահել հայ նախարարներին, որոնք նրա ու նրա նախորդների ժամանակը զբիլված են եղել իրենց նախկին արտոնությունների շատերից: Ուստի 770 թվականին Հայաստան էին ուղարկվել թյուրքական զորքեր:

Այդ զաղանարար ու արշուներու վարձկանները, որոնք առիթ էին որոնում ավերածությունների ու թալանի համար, ծաղրում ու թալանում էին Հայաստանի բնակչության բոլոր խավերը:

Կարճ ժամանակից հետո արաբական տիրապետության դեմ բռնկվեց ապստամբություն (774 թ.), որը կրում էր համաժողովրդական ազատագրական շարժման բնույթ: Ապստամբության ղեկավարներն էին սկզբում Արտավազդ և Մուշեղ Մամիկոնյանները: Ապստամբները Շիրակում, Բաղրևանդում և Տարսնում կոտորեցին հարկահավաքներին և արաբական զորամասերը: Կարինից ու Դվինից Մուշեղի դեմ ուղարկված զորքերը մասնավոր խոշոր պարտություն:

Ոգևորված Մուշեղի հաջորդություններով, նրան միացան նաև մյուս նախարարները իրենց զորքերով և ամենուրեք շարժումը բնագրկեց նաև ոսմիկների լայն մասսաներին:

Ահարկված արաբները, որոնց համար Հայաստանում, իրեն հենարան, ծառայում էին ամրացված քաղաքները, ստիպված էին թափվել և ամրանալ Դվինում, Կարինում և Արճեշում: 775 թվականի զարնանը պաշարվածներին օգնության եկան Հայաստա-

նի խալիֆայական երեսուն հազարանոց բնորոշ զորքեր և ապստամբությունը անողորմ կերպով խեղդվեց:

Ղեկնող պատմագրի հաղորդագրությամբ, ապստամբների մի մասը, որը պաշարել էր Կարինը և բաղկացած էր մեծ մասամբ հետևակ և թևակալներ, ուղղված ուղղությամբ, հնարավորություն ուներ խույս տալ թշնամու դեմ կռիվուց, որը վեց անգամ նրանցից շատ էր: Բյուզանդիայի արևելյան սահմանները, ինչպես հայտնի է, գտնվում էին Կարինից ոչ հեռու:

«Սակայն ապստամբները,— ասում է Ղեկնողը,— որոշեցին, որ ավելի լավ է մեռնել, քան տեսնել իրենց երկրի կործանումը... և, թեև բանակով թշնամուց քիչ էին, նրանք կամոյին զնացին բնոգեմ իրենց կյանքին սպառնացող վտանգին»:

774—775 թվականների ապստամբությունը խեղդելուց հետո, 8-րդ դարի վերջին բառարկում Հայաստանի պատմությունը ներկայացնում է անընդհատ կոտորածների, ծանր հարկահանությունների, ավազակային կողոպուտի և ամեն տեսակի բռնությունների ու հալածանքի մի շրջան:

8-րդ դարում Հայաստանի կուլտուրական զարգացման մեջ նկատվում է մեծ անկում և նույնիսկ անտեսական կյանքի հետադիմություն, որ բացատրվում է ոչ միայն վերն հիշված քաղաքական ցնցումներով, այլև Սև ծովի նավահանգիստների հետ միջազգային առևտրի ընդհատումով:

Չնայելով այն բարենպաստ պայմաններին, որ ստեղծվել էին արաբական աշխարհակալների կողմից լայն համաշխարհային հարաբերությունների համար, Հայաստանը արաբական տիրապետության առաջին ժամանակաշրջանում կորցրեց միջազգային առևտրում իր ունեցած անդրը:

7—8-րդ դարերում խալիֆայության առևտուրը արտաքին աշխարհի հետ զարգանում էր ոչ թե Բյուզանդիայի հետ ունեցած սահմանային մարզերում, այլ զլխավորապես Չինաստանի, Հնդկաստանի, Իսպանիայի և հարավային Նիլոսայի մյուս մասերի հետ:

Հայաստանի վրայով Բյուզանդիայի հետ անմիջական առևտրական հարաբերություններ ունենալ համարյա հնարավոր չէր, խալիֆայության և Բյուզանդիայի միջև տեղի ունեցող անընդհատ ու արյունահեղ կռիվների պատճառով: Պոնտական Տավրոսից մինչև Միջերկրական ծովը տարածվում էր լայն սահմանային գոտի, որտեղ երկու կողմերում էլ զրված էին ամրոցներն ու զինվորական կայանները, որոնք դարերի ընթացքում վարում էին սահմանային կռիվներ:

Բնական է, որ այդ իրադրությունը բացատրում էր լայն միջազգային առևտրի ամեն մի հնարավորությունը:

Չնայելով արաբական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանում ստեղծված ծանր դրությունը, գրական կյանքը չէր դադարում այնտեղ նաև 7-րդ և 8-րդ դարերում:

7-րդ դարի աչքի ընկնող գրվածք է Սեբեոսի «Պատմությունը», որն իր մեջ պարունակում է արժեքավոր տեղեկություններ Բյուզանդական-պարսկական կոնֆլիկտի մասին 6-րդ դարի վերջում և 7-րդ դարում վերջին Սասանյանների մասին և արաբների առաջին աշխարհակալ արշավանքների մասին (մինչև 661 թվականը): Սեբեոսի պատմության շարունակող է եղել 8-րդ դարի պատմիչ Ղևոնդը, որը գրել է արաբական խալիֆաների պատմությունը մինչև 788 թվականը և, գլխավորապես, արաբների տիրապետության պատմությունը Հայաստանում: Գրողների թվում բացառիկ խոշոր դեմք է 7-րդ դարի երկրորդ կեսի գիտնական-մաթեմատիկոս և տիեզերագետ Անանիա Շիրակացին: Նրա անվան հետ են կապված բազմաթիվ երկեր մաթեմատիկական գիտություններից, որոնցից հասել են մեր ձեռք մի փոքրիկ խնդրագիր, թվաբանական դասագրքից մի հատված, չափադիտական աշխատություն Բյուզանդական-սասանյան դարաշրջանի կշիռների ու չափերի և մի քանի աշխատություններ ու թարգմանություններ տիեզերագիտական, օդերևութաբանական և ժամանակագրական բովանդակությամբ: Նրան են վերագրում համաշխարհային խոսնիկայի թարգմանությունը, որի հեղինակը համարում են Իսպուլիտ Հոռմաչեցուն:

8-րդ դարի վերջում, քաղաքային, գաղթականություն և ավերման շրջանում, ֆեոդալական Հայաստանը գտնվում էր տանջալից հոգեարթում և նրա վերջնական անկումը թվում էր անխուսափելի: Հայկական նախարարությունները գրկված էին իրենց նախկին զինվորական ուժից, հետևաբար, նաև զիմադրական կարողությունից: Նախարարական կալվածները, որ անցել էին մասամբ մուսուլմանական ու արաբական ամիրաների ձեռքը, բնակեցվում էին արաբական ազգաբնակչությամբ: Նրկրի տերերը, հատկապես Հայաստանի հարավային մարզերում դարձել էին մուսուլմանական և արաբական իշխաններն ու ֆեոդալները: Նախարարական Հայաստանը գտնվում էր կորստյան ծայրում:

Սակայն շուտով, արդեն 9-րդ դարի առաջին կեսում հանկարծ սկսեցին երևան գալ հայկական նախարարությունների վերածննդի ման համար նոր, նպաստավոր բաղադրական պայմաններ:

Նախարարական Հայաստանի նորից գործնականում նպաստեցին խալիֆայության մեջ առաջացած խլրտումները և խռովությունները, որոնք 9-րդ դարից սկսած գլորվել էին համարյա անընդհատ:

Բազմաթույնները, որոնք 774—775 թվականների ապստամբությունից հետո գնացել էին Հայաստանի արևմտյան լեռնային շրջանները և այնտեղ գտնվում էին Բյուզանդիայի հովանավորության տակ, լարված ուղղորդված հետևում էին քաղաքական իրադարձություններին, որոնք տեղի էին ունենում խալիֆայության սահմաններում:

793—794 թվականներին Պարտավում և Փայտակարանում, ներկա Ադրբեջանի սահմաններում, բռնկվեց պարսկական աղանդավորների խոշոր ապստամբություն Աբու-Մուսլիմի առաջնորդությամբ: Ապստամբները ոչ միայն կարողացան պարտության մատնել մի քանի անգամ, իրենց դեմ ուղարկված արաբական ոստիկան-կառավարիչներին, այլև իրենք անցան հարձակման և մոտ 4 ամիս պաշարման մեջ պահեցին Դավիթ քաղաքը: Նկարագրելով այդ դեպքերը, Յակուբի պատմագիրը իր «Պատմության» մեջ նշում է, որ այնուհետև ուժեղացավ Հայաստանի կարողությունը:

Հենց նույն ժամանակում վերսկսվեցին համառ և պարբերաբար կրկնվող խալիֆայության կոնֆլիկտներ Բյուզանդիայի և խաղաղների հետ: Այդ պայմաններում, իհարկե, որոշ կշիռ և նշանակություն էին ստանում նույնիսկ թուլացած հայկական նախարարությունները: Խալիֆայության համար կարող էին հատկապես վտանգավոր լինել Բաղրատունիները և, ամենից առաջ, նրանք, որ ապստան էին գտել Բյուզանդիայի սահմանակից շրջաններում (Սպերում, Տալրում և Կղարբբում) և որոնք բարեկամական հարաբերությունների մեջ էին մտել կալուքության հետ Ուստի և Հարուն-ար-Ռաշիդ (785—809 թ. թ.) խալիֆան ստիպված էր բարեկամական դիրք և զիջող քաղաքականություն վարել նրանց վերաբերմամբ:

(Շարունակելի)